

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie *مجموعه علوم*

ԽՐԲԱԳՐԱՊԵՏ-ՏԵՕՐԷՆ
Ղ. ԲՈՒԱՏ

Ի. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 22

1898 ՕԳՈՍՏՈՍ 1

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, Վեցամսեայ 26, իսկ եռամսեայ 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 Ֆրանկ: Թղթասարի ծախքը հաճախորդից կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բույ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ. — Երկրագործական:

ՄԱՔՍԻՄ. — Առողջապահական Յուշատետք — Ստամբուլի Հիւանդութիւնք:

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ. — Թէ ի՞նչպէս ճանչնալու է անխարդախ թէյը:

Ն. ԹՈՔԱԹԼԵԱՆ. — Իրաւաբանական — Դրոշմաթուղթի օրէնքը:

Ղ. ԲՈՒԱՏ. — Շերամաբուծութիւնը — Մակարուծային Հիւանդութիւններ:

ԱՐԱՔՍ. — Առանձին Տիտեանական,

Զուարճալիք:

Ե. Մ. ՏԷՅԵՆԻՆԵԱՆ. — Լուծումն հնդկի Դ.

Տ. ՊՕՋԱՃԵԱՆ. — Դիտական խնդիրներ

Բառարան. — Թղթակցութիւնք. — Հանելուկ — Ծանուցումներ:

Հատը 40 փարայ

Կ. ԳՈՒԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Ն. Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Մահմուտ-փաշա, Բիրֆհի խան թիւ 26

«Հանրագիտակ»ի գործակաճար կար-
գած ենք. Պ. Վարագդաս Քիլէհեան
մեր նախորդ գործակաճարը Պ. Յա-
կոբ պաճօնէ դադրած ըլլալուն համար:

ՎԱՐԱԳԴԱՍ
«Հանրագիտակ»ի

ՀԱՆՆԵՆԻՍ ԹԻՒ 13

Կենդանի եմ եո ես շատ պիտանի,
Ձիս լաւ կերակրէ որ քեզ վարձատրեմ,
Եթէ ուզես զիս թողուլ անօթի,
Ոտքս ինձի բեր, ես զայն ալ կուտեմ:
Գըլուխս երբ բերնէդ դու դուրս կը հանես,
Քու գըլուխդ ալ դէպ ի վեր կը նետես:
Որպէս զի ես շատ չ'չարչարեմ քեզ,
Ըսեմ թէ միայն երկու վանկ եմ ես:
Ոտքէս երկու մաս, գլխէս ալ մի մաս՝
Կըլլայ սատանին յաղթող մի նշան:
Նոյն հաշուով զըտիր դարձեալ երեք մաս,
Կըլլաս սատանի զաւակ մի արժան:

Յ. ԵԷԼԵՖԵԱՆ

ՏՈՒՔ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆԻ
ԳՈՐԾԵՐՆ

Գիտկն. Շարժում Ա. Տարի (սպառեալ)				
» » Բ. »	20	Ղ.Ե.		
» » Գ. »	20	»		
Բնակն. պատմ. Ա. Հասոբ (Կենդ.				
Հիւսուածարանութ. եւ Մարդկ.				
Կազմ. ու Բնախօսութիւն) Դա-				
սագիրք Երկրդ. վարժարանաց.	40	»		
Նախորդին համառօտը, Դասա-				
սագիրք նախակրթարանի	3	»		
Ուսումնասիրութիւն Միջային քա-				
րերու պատճառարանութեան եւ				
կազմութեան վրայ (Ֆրանս.).	10	»		
Ծագումն Հայ Տառից (գործ պա-				
կեալ Իզմիրլեանց մրցանակաւ.	10	»		
Մանրեաբանութիւն.	10	»		
Տիեզերք եւ իւր Կազմութ. (Ֆրանս.).	10	»		

Լուծումն Թիւ 12 Հանելուկի

Դու գեղեցիկ (պատկեր) մ'ես,
Ճարտար ձեռքէ հազիւ կ'եղես.
Երբ յիշատակ մը չունենամ,
Քեզ նայելու պէտք կ'ունենամ:
Քու արժանիքդ անոնք գիտեն,
Որ խեղացի ու խոհուն են.
Պահեն քեզ մէջ շրջանակի,
Որ չ'ազտտոխ չըլլաս ոչինչ:
Վանկդ առաջին երբ զատեցի՝
(Պատ) լառն խկոյն ես լսեցի.
Վախցայ չըլլայ թէ սահիմ վար,
Ձի վտանգ մը պիտի ինձ գար:
Հուսկ կեր հրամանդ երբ լսեցի,
Շնորհակալ եղայ եւ սկսեցի.
Կարծեմ թէ ես քեզ լուծեցի,
Խօսքս ալ քեզ հետ վերջացուցի:

Պէգ. Մայր. վարժ ի աշխոյս. — ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Լուծած են նաեւ Պ. Պ. Յակոբ Ն. Դա-
րուճեան, Աշակերտ Պէգճան Մայր վարժա-
րանի, եւ Յակոբ Արայճեան:

Լուծումն Թիւ 11 Հանելուկի

Ճիշտ քառորդ մ'ես անդադար
Փնտռեմ զքեզ, մի՛ բարկանար,
Յուսամ թէ քողդ պատառեցի,
Յամառութեանդ ալ յաղթեցի:
Գուցէ ըլլաս, դու մի կարկին
Ոտքով երկու, վանկով կըրկին:
Երկրորդ է «կիւն» խիստ ճարտար
Առաջնոյդ մէջ, որ միշտ է «կար»
Ահողջութեամբդ ես անլեզու,
Ալ լուծեցի, ո՛վ խնդրարկու:

Այսքն ԶԱՊԵԼ Յ. ԵԱԶԸՃԵԱՆ

11 թիւ հանելուկը բարեգիւղութեամբ եր-
կու օրիորդներ լուծած են ոսանաւորով, մին
արդէն տեսնուեցաւ Հանրագիտակի 21րդ թի-
ւին մէջ, իսկ միւսն ահա կը հրատարակենք
որ զրկուած է Ա. յաղնէն:

Այս առթիւ կ'իմացնենք մեր ազնիւ ըն-
թերցողներու թէ՛ հանելուկի եւ գիտական
հարցերու լուծումները պիտի հրատարակենք
մէկ ամիս վերջ, գաւառներու մեր բաժա-
նորդներու փախաբանաց գոհացում տալու
համար:

Հինգ հանելուկ կամ գիտական հարցեր
չարունակաբար լաւ լուծողը պիտի ստանայ
նաեւ մրցանակ մը:

Մրցանակներու ցուցակն կանխաւ պիտի
հրատարակենք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ



Գրական եւ Գիտական

Encyclopedie مجموعہ علوم

ԽՐԱԳՐԱՊԵՏ-ՏԵՕՐԷՆ

Ղ. ՌԱՍ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 22

1898 ՕԳՈՍՏՈՍ 1

ՆԻՆԻՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԵԱԿԱՆ

Ա.

«Նա ու յիսկ կուսայ դաշտեր»
Սիրելի լուսայ առարկան թիւնը»
ՏԵՐԻՆ

«Անհրեւակայիլի եւ անրացատրելի հաճոյք մը կ'զգամ, երբ դաշտերուն մէջ կը գտնուիմ. գիտուն մարդուն համար արդէն ամենէն յարմար կեանքը դաշտայինն է»։ Ըսած է Կիկերոն հռոմայեցի անուանի ճարտասանը. որ կ'ապրէր Քրիստոսէ 106 տարի առաջ։ Յիրաւի արդեօք դաշտային կեանքէն առկի հաճոյալիւ, անուշ կեանք մը կա՞յ. հոն, հեռու քաղաքներու ժխորէն ու ապականալ մթնոլորտէն, բնութեան ծոցը թաղուած, հիւտնդը իրեն դարման կը դրուուայ, ծերը՝ ծառի մը շուքին տակ նստած կեանքի կուռն յոգնած զլուխը կը հանդէսցընէ ու իր վերջին օրերը կը համիւ. բանաստեղծը՝ Աստուածային ներշնչում մը կուսնայ ու փոխանակ քաղաքներու մէջ տեղի ունեցած տառապանքներու մէջ տեղի երգէ բնութեան գեղեցիկութիւնը, նկարագրէ գիւղական հանդարտիկ ու պարզ կեանքը։

Դաշտերուն մէջ վերջապէս աշխատողին գործ չպակսիր. մեծ կամ պզտիկ, իրենց յարմար գործ կը գտնեն ու երկիրը՝ եթէ պէտք եղած խնամքները ընդունի՝ հարուստութեան անսպառ աղբիւր մը կըլլայ։

Հին ատենուան փիլիսոփաները, գիտունները՝ ինչպէս Քլին, Վիրգիլիոս, Կիկերոն եւրն, չառ լաւ ըմբռնած էին թէ ուր որ երկրագործութիւնը կը յառաջանայ, հոն հարստութիւնը չպակսիր, ու իրենց գրքերուն մէջ ընդարձակ մաս մը նուիրած են երկրագործութեան, գրքեր՝ որոնք հին ժամանակուան համար մէկ մէկ հրաշակերտներ էին։

Մեր բանաստեղծները, գրագէտները եւ գիտունները ընդհանրապէս մեծ կեդրոններու շուրջը հաւաքուած՝ կ'երգեն ու կ'երգեն գեղեցիկը, երկինքը, աստղերը, սէրը... Դեռ շէն համագումար թէ բուն բանաստեղծութիւնը դաշտային կեանքն է, երկրագործին աշխատութիւններն են, եւ ասոր միակ պատճառը մեր վարժարաններու մէջ տրուած թերի կրթութիւնն է։

Շատ վարժարաններ ունին տարրական եւ բարձրագոյն. օրիորդներու համար արհեստանոց մը կայ, եւ ուրիշներ ալ կ'առաջարկուին. քահանայներ ու վարդապետներ պատրաստելու համար վանքեր չեն պակսիր. կ'ուզենք ունենալ վարժապետանոց մ'ալ (առ է՛ր պակաս), բայց ո՞ւր է մեր երկրագործական վարժարանը, ո՞ւր են երկրագործ-

ծախիւն ուսումնալ աշակերտները. ո՞ւր են երկրագործական ուսուցիչները. ո՞ւր են մեր երկրագործական գիրքերը ու թերթերը. ասանցմէ եւ ոչ մին ունինք, մենք հայերս, մենք որ մեծ մասամբ երկրագործ ենք, մենք որ աշխարհի վրայ չենք կրնար պարծիլ մեր դիտական գիւտերով կամ ճարտարարուեստով, մեր պարծանքի միակ կէտը երկրագործութիւնն է. եւ այն ալ աւաղ, երեսի վրայ թողած ենք, ինչո՞ւ. — որովհետեւ մենք մեր պէտքը չենք ճանչնար, չենք քաջալերեր մեզ համար աշխատողները:

Մօտենանք երկրագործի մը. որ առաւօտէն մինչեւ երեկոյ կ'աշխատի անխոնջ, ամիսն կ'իղիչ արեւուն տակ, թրջելով իւր հողերը առատ քրտինքով. հարցնենք իրեն թէ ի՞նչ է երկրագործութիւնը, ի՞նչ է իր նպատակը: Անշուշտ պիտի ըսէ թէ իր նպատակն է ըստակ չահիլ համեստօրէն ապրելու համար, սակայն չպիտի կրնայ պատասխանել թէ ի՞նչ միջոցներու պէտք է դիմել իր աշխատութեան աւելի լաւ օգտուելու համար:

Համարձակօրէն պիտի ըսէ. «Հայրս եւ մեծ հայրս ինձմէ առաջ ցորեն ցանցցին, ինձ կը մնայ անոնց պէս ընել ու ցորենը պիտի անի»:

Կը կարծէ թէ ամբողջ երկրագործութիւնը կը կայանայ արօր մը վարելուն, ցորենը ցանելու, ու քաղելուն մէջ: Պէտք չէ ըսել թէ մեր պապերը այսպէս են հողը մշակեր, մենք ալ նոյնը ընենք. ո՛չ: Ասկից 20—30 տարի առաջ մեր հայրերը, մեծ հայրերը կարաւաւով կամ նաւով կը ճամբարդէին. ո՞ւր են այսօր այն թուռները. որոնք պիտի համարձակին մերթելու շոգեկառքին եւ շոգենաւին առաւելութիւնները: Նոյնպէս ունինք երկրագործներ՝ որոնք կ'ըսեն ինչ որ տեսած են իրենց հօրմէ, բնաւ չեն ուզեր գիտցածնուն մատ մը անդին անցնիլ, չ'ունին ոչ մի գաղափար նոր մեքենաներու, նոր կանոններու վրայ՝ որոնք երկրագործին թէ՛ ստակի եւ թէ՛ ժամանակի զգալի խնայողութիւն մը կուտան. մէկ խօսքով մեր երկրագործները ժամանակին հետ չեն փոխուի:

Բայց կը գտնուին անշուշտ երկրագործներ որոնք կ'ուզեն Եւրոպական երկրագործական գործիքներու ու դրութիւններու վրայ գաղափար ունենալ ու ի հարկին օգուտ քաղել

անոնցմէ. բայց գիւղացին հազիւ հայերէն կարդալ գիտէ et encore, Եւրոպական լեզու մը չգիտեր որպէս զի կարդայ օտար գիրքեր կամ թերթեր, հայերէն հոգադորժական գրքեր ալ չունինք, որով միշտ կամաց կամաց կը մնայ տգիտութեան միւսեւոյն շաւղին մէջ եւ չյառաջանար ոչ մի քայլ (անշուշտ այս խօսքերնիս չենք ուղղեր զարգացած երկրագործներու՝ որոնք դժբաղդաբար մեր մէջ շատ քիչ են), հայերէն երկրագործական գրքեր ու թերթեր չունենալուս պատճառը ո՞վ է. — կը կրկնենք դարձեալ ժողովուրդն է, որովհետեւ նա իր պէտքերը չճանչնար ու չքաջալերեր իրեն համար աշխատողները: Օրինակը աչքերնուս առջեւն է:

Երբ ասկից մի քանի ամիս առաջ Հանրագիտակ մեր բարեկամ Ղ. Բոլատ Էֆէնտիի խմբագրութեամբ սկսաւ հրատարակուիլ, ամենուն դէմքին վրայ ուրախութեան նշոյլներ նշմարուեցան. ահա՛, կըսէին, թերթ մը որ առաջին անգամ ըլլալով ժողովրդական լեզուով եւ ճոխ պարունակութեամբ երկրագործութեամբ կ'զբաղի. բայց ցաւալի է ըսել որ այսօր միւսեւոյն անձինք կ'ուզեն թերթը ձրի կարդալ. արդեօք չեն երեւակայեր թէ խմբագրութիւնը ո՞րքան մեծ զոհողութիւններ կընէ եւ եթէ այսպէս շարունակուի, Հանրագիտակ ալ իր նախորդներուն պէս դադարելու դժբաղդ ճակատագիրն պիտի ունենայ:

Սիրելի՛ ընթերցող, մենք շատ ուշ արթնցանք. եւրոպական երկրագործները հրաշքներ կը գործեն բերքերու առատութեամբ եւ տեսակին ազնւութեամբ. դոնէ ջանանք մեր արթնութիւնը պահել ու շարունակել. վարձատրենք մեզ համար աշխատողները, որպէս զի անոնք ալ աւելի եռանդով աշխատին ու օգտակար ըլլան: Առաջի օրէն կուհած էինք որ Հանրագիտակ մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ մեր երկրագործներու եւ հասարակութեան: Երեւանք քիչ մը ու քսակնուս բերանը բանանք. ո՛հ, շատ չնչին գումար մը զոհելու համար:

Գաւառացի երիտասարդներ, մենք որ քիչ մը վարժարանի երես տեսած ենք ու կը ճանչնանք ընթերցանութեան օգտակարութիւնը, տարածենք Հանրագիտակը երկրագործ դասակարգին մէջ, կարդալ չ'գիտցողներուն, կարդանք ու բացատրենք, ու կար-

գալ զիտցողներն ալ համոզենք, ու վարժեցնենք ընթերցանութեան, ու այն ատեն ամենքնիս ալ գոհ՝ կրնանք ըսել թէ մեծ ծառայութիւն մը մատուցած ենք Հայ երկրորդագործներու, եւ նպաստած ենք անոնց յառաջացման:

Կը տեսնէ՞ք զիս ո՛րչափ հեռու տարին, կարծեմ ընթերցողը ներողամիտ կը դտնուի: Մենք ալ կը կարծենք որ մեր աշխատութիւնն ալ ապարդիւն չ'ալիտի ըլլայ եթէ Հանանք տալ մի քիչ ընդհանուր տեղեկութիւններ երկրագործութեան վրայ:

Բուն երկրագործութեան անցնելէ առաջ պարտք կը համարինք մէկ երկու խօսքով ընել երկրագործութեան պատմութիւնը, ցուցնել իր տարրեր շրջանները եւ օգտակարութիւնը, եւ ապա բացատրել կարելի եղածին չափ միշտ պարզօրէն, որպէս զի մինչեւ անգամ միայն կարգալ զիտցողն ալ հասկնայ ինչ որ փափագենիս ու նպատակնիս է՝ թէ ինչ է երկրագործութիւնը, իր նպատակը, մշակութեան տարրեր տարրեր դրութիւնները եւ այլն եւ այլն:

Ռօսոսթօ

Մ. ՄԱՆԱՔԵԱՆ

ԱՌՈՂՁԱՊԱՆԱԿԱՆ ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՍՏԱՄՈՔՍԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. Տես թիւ 12)

Ուրիշներ զժողարամարտութիւն կ'ունենան, որովհետեւ կերած սնունդնին աղէկ չեն ծամեր, եւ ճաշն անմիջապէս յետոյ աշխատելու սովորութիւնն րրած են: Եւ կամ շատեր ալ չափազանցօրէն կուտեն համեմատած կերակուրներ: Կը խմեն ալք լային ըմպելիներ: Կը գործածեն զրգոյիչ սնունդներ, որոնք ուժգնապէս կ'առաձգեն ստամոքսը, եւ կամ անհամեմատ կերպով ստամոքսին հիւթը արտատարելու պատճառ կ'ըլլան: Ամեն տեսակ չարիքաւորութիւն, անքնութիւն, արտատուր աշխատութիւններ, ափսոսելու անհշտամիտութիւններ, վրէտ եւ լն: վերջապէս յառաջ կը բերեն զժողարամարտութիւն:

Դժուարամարտութեան ենթակայ եղող ունձինք յաճախ կը գանգատին իրենց տաժանակիր եւ յամբընթաց մարտողութենէն: Անօթութիւն չեն զգար, եւ իրենց ստամոքսին մէջ շարունակ լեցունութիւն եւ ծանրութիւն կ'իմանան: Ծոշի սկսած ատեննին բաւական կ'ուտեն, եւ խնամով կը պատեն իրենց ուտելիքները, ընդհանրապէս ճարպային նիւթերը մէկ կողմ դնելով: Բայց մարտողութեան գործողութիւնը սկսելուն պէս, իրենք ալ կ'սկսին յօրանջել (жажнѣт), յաճախակի զգայուններ (կեյիւմե) կ'ունենան, որոնք ընդհանրապէս թթու կ'ըլլան, ստամոքսնին եւ աղիքնին փուքով կ'ուռնան, արիւնը երեսնին կը համախմբի, կը կարմրին եւ քնանալու ձգտում մը կ'ունենան, կամ կը փսխեն ուժանք: Սակայն ամեն պարագայի մէջ, ուչ կամ կանուխ սնունդները կը մարսուին վերջապէս, եւ ենթական մինչեւ հետագայ ճաշին քիչ մը կը հանգստանայ: Առաւօտուն զժողարամարտութեան ենթակայ եղողը երբ արթննայ, բերանը չոր եւ լեզուն կաշուն նիւթով մը ծածկուած կ'ըլլայ: ստամոքսի կողմը ցաւեր կ'զգայ, որովայնապընէ դրութիւնը սովորական դարձած է իրեն համար: Յաճախ գլխու պտոյտ եւ զլուացաւեր կ'ունենայ, եւ աշխատութեան անյարժար կ'զգայ ինքզինքը: Եւ այս ախտածէտ վիճակի հետեւանքը կ'ըլլայ նիհարութիւն, աւնարիւնութիւն, ամայնախտ եւ լն:

Բուն զժողարամարտութիւնը, թէեւ ռարնթաց (chronique) հիւանդութիւն մ'է, եւ տևողութիւնը անստոյգ, բայց շատ անգամներ կը պատահի որ, մերթ դադրի, մերթ եւս վերսկսի: Ախտածէտ ենթական երբեմն աղէկ կը մարսէ, երբեմն ալ զհչ, իր ստամոքսը տարօրինակ եւ յամառ կ'ըլլայ: մերթ ամենէն զժողարամարտ սնունդները դիւրութեամբ կը մարսէ, մերթ եւս տեղի կ'ունենայ հակառակը, միեւնոյն կամ հակառակ պարագաներու մէջ: Դժուարամարտութիւն ունեցողներէ ոմանք ալ, ուտեստներէն զըլուռելու կամ անախորժութիւն զգալու տեղ, շարունակ իրենց ստամոքսնին մէջ պարագութիւն մը կ'զգան, միշտ տնօթի են: Եւ եթէ երբէք կշտանան, այն ատեն ալ իրենց ամբողջ մարմնոյն վրայ թուլութիւն մը, տըկարութիւն մը կ'զգան: Որկրամիտութիւնը

կը պատահի ընդհանրապէս արգանդային ջրագարութիւն ունեցող կանանց, որոնք ոչ զգայաւոր կ'ունենան, ոչ փսխում, եւ ոչ ալ պնդութիւն, այլ աւելի որովայնալուծութեան ենթակայ կ'ըլլան:

Ջղային մարսածէտութիւնն ալ դժուարաւ մարսութեան մէկ տեսակն է որ յանկարծուստ երեւան կուգայ, եւ կը պատահի ընդհանրապէս երկարատեւ մտային աշխատութիւններ ունեցողի: Հիւանդութիւնը երեւան կ'ըլլէ ամեն ամիս, կամ ամեն 2 ամիսը անդամ մը, եւ կ'անհետանայ, երբ ենթական ժամանակ մը հանգիստ առնէ: Հիւանդութեան տեսողութեան մէջ անտանկի զլսուցաւեր կ'ունենայ, փսխումներ եւ զգայաւորներ, երբեմն այն աստիճան թթու, որ ժամերով որկորին մէջ դառնութիւն մը եւ կընկրնում մը կ'զգայ:

Ասոնք են ահաւասիկ դժուարամարսութեան ախտանշանները, որոցմէ մին կամ մէկ քանին մէկտեղ կը տեսնուին ընդհանրապէս ենթականերուն վրայ:

Դաւմանում. — Ամեն բանէ առաջ պատճառը գտնալ, եւ բնութեան պահանջմանց հպատակիլ պէտք է: Ռոճիկի կանոնաւորումը կական պայմանն է ախտաբուժութեան: Կերակուրներու մէջէն պէտք է ամենէն աւելի ուտել ճերմակ միսերը. զոր օրինակ հաւու, հորթի, գառան միս, թերխաշ խորտիկներ⁽¹⁾, եւ կաթ: Իբր ըմպելի դործածելու է, ջուրէն աւելի գինի, գարեջուր եւ դառն ըմպելիներ մանաւանդ: Ճաշի ժամերը ճշգրէ այսինքն՝ ամեն օր միեւնոյն ժամուն ճաշել, եւ կերակուրները աղէկ ծամելէ վերջը կլել: Զգուշանալու է շատ խմել, որպէս զի ըստամոքսի ընդլայնման տեղի չտայ:

Իբր դառնահամ ըմպելի կը յանձնարարուի դառն կասիան (անիսադան), լերդախոտի չոր տերեւներ (ժէռմանտուէ, եւր փաշամուսը), օշինդրի ծաղիկներ (ապսէնթ՝ փեղին), ինչպէս եւ գետնալեղիի ծաղիկները (բղիգ սանթուէ, գանքուս յիշէի) եւ բոգի (ժանսիան. անիքիան) արմատները: Ասոնք ամենն ալ կաղաւթիչ յատկութիւններ ունին, ախորժակը կը գրգռեն, տկարացած սթերը կը վերականգնեն, եւ մարսողութեան կազ-

մածի ուժասպառութենէն յառաջ եկած որովայնալուծութեան առաջը կ'առնեն, եւ հետզհետէ մարսողութիւնը կանոնաւորութեան կ'ենթարկեն:

Առէք հաւասար չափով այդ դառնահամ բոյսերու 4 տեսակէն 8 կում ընդամենը, այսինքն՝ իւրաքանչիւրէն 2 կում, եւ մէկ լիդրա եռացած ջուրի մէջ դնելով, ժամ մը թողուցէք, յետոյ պարզուտէ անցնելով դործածեցէք:

Նոյնպէս բոգի արմատի ջեռաթուրմը օգտակար է այս օրինակ պարագաներու մէջ, զոր կը պատրաստեն 4 կում մանրուած արմատը 1 լիդրա եռացած ջուրի մէջ 2 ժամ ձգելով:

Փայտածուխի փոշին կը դործածեն զրուարամարսութեան մէջ, երբ բերանը գէշ կը հոտի: Արդէն այս փոշին սովորական եւ ընտիր մաքրող մ'է ակաւներու: Ամենէն աղէկ փայտածուխի փոշին կը պատրաստեն բարտի (գալլաֆ աղանը) փայտէն, որուն պատրաստը կը ծախուի դեղավաճառներու քով Շառպոն քը Պելլոֆ անունով. եւ կը դործածուի 1 էն 3 սուրճի դգալ իւրաքանչիւր ճաշի ատեն կլելով, եւ կամ 1 դգալ առաւտները անօթի փորանց:

Զրաբուժութիւնը շատ օգտակար է փտին շարնթացիկ եւ հետ փիճակին մէջ. եւ կը յանձնարարուի մանաւորապէս սաղ ըմպանքներու (սոդաֆ պանեօ, սուշ) այլ եւ այլ տեսակները (ջուրի բարեխառնութիւնը 6 էն 10 հարկորոգ աստիճան ըլլալու է), որ պէտք է վերջանայ մարձումներով (չփում): Զոր օրինակ, առաւօտուն անկողինէն լլննուդ պէս, իսկոյն սաղ ջուրի մէջ թրջած եւ ջուրը քամուած սաւանի մը մէջ կը սլլուէք. սաւանը պէտք է առաջուց պատրաստ ըլլայ, որպէս զի մարմինիդ չաղած վրանիդ առնէք, առանց ժամանակ անցնելու: Այս պարագային օգնական մը պէտք է ունենաք, որ սաւանը կռնակիդ տակէն վերջը, սկսի անմիջապէս եւ ուժով ձեռքերը բաց՝ մարձն ուսերնիդ, կռնակիդ, բազուկներնիդ, ազդրներնիդ, որունքնիդ, եւ միեւնոյն ատեն դուք ալ ձեր մարմնոյն առաջակողմի մասերը կը մարձէք միշտ ուժով եւ շուտով (կուրճերներնիդ, որովայնիդ, ազդրներնիդ եւլն.): Այս դործողութիւնը պէտք

(1) Մանանխով (հաւաթ, մուսաւաթ ըստածը):

է տեւէ առ առաւելն 4 էն 5 վայրկեան. եւ կամ մինչեւ որ զգաք թէ սաւանը սկսած է տաքնալ. այն ատեն իսկոյն հանելով սաւանը, ծածկուելու էք ուրիշ չոր եւ կարծր սաւանով մը, որով պէտք է չորցնէք ամբողջ մարմիննիդ ուժով շփելով:

Իբր նախազգուշութիւն կը յանձնարարուի, սաւանը կռնակնիդ առնելէ առաջ, ճակատնիդ եւ քունքերնիդ պաղ ջրով թերջել: Դժուարամարտութեան մէջ պնդութեան առաջքը կ'առնուի թեթեւ մաքրողականներով. զոր օրինակ գինեմրորի սերուցը (գրըմ քարքար), որ թեթեւ եւ միանգամայն ազդեցիկը կ'ազդեցնող լուծողական մ'է. եւ իր ամօքիչ եւ բարեխառնող յատկութիւններով ուրիշ լուծողականներէ աւելի յանձնարարելի է, որոնք զօրաւոր ըլլալով, կանացի կարգ մը հիւանդութիւններու մէջ, արեւային արտածորումը կը գրգռեն, (տեւատեսութիւն (métrorrhagie) դաշտան (menstrue), ինչպէս եւ թութք (մայաւրջ, hémorrhoides) ունեցող անձանց ալ տեւատեսութեան (սրբանէն կախուած արիւնային ուռոյցները) կը բորբոքեն. մինչդեռ գինեմրորի սերուցը աւելի բարեբար ներգործութիւն մ'ունի անոնց վրայ, որ կը մատակարարուի սովորաբար, հետեւեալ եղանակներով:

Պատրաստեցէք նախ բուսային արգանակ մը (bouillon aux herbes) սա կերպով:

Թրթնջուկ (գուզուգուզաղը) . . . 40 կում
Աղցան (սալաթա) 20 »
Բազուկ (փաղը poirée) 20 »
Բեղական (cerfeuil. փռկնկ
մաղսանուր) 20 »

Հաւցէք, մաքրեցէք, ջարդեցէք եւ եփեցէք 1250 կում ջրի մէջ. աւելցուցէք վրան:

Կարագ 5 կում
Ալ 2 »

Հաստ կտուէ մը անցուցէք եւ խառնեցէք մէջը.

Դիւրահալ գինեմրորի սերուց . 30 կում
Ամեն առաւօտ ջրի գաւաթով առնելու է:
Օգտակարապէս կը գործածուի նաեւ խաւարծիլը (ռալկն Rhubarbe). որ ընտրեալ-

գոյն կազդուրիչ—լուծողական մ'է. երբէք խոտուկներ յառաջ չըրեր, եւ կարգ մը զօրաւոր լուծողականներու պէս ստամոքսը եւ ազդեցիկը չյոգնեցներ: Ընդհակառակն՝ ախորժակ կը բանայ, եւ ամբողջ յօրինուած կազմութիւնը կը կազդուրէ: Մանաւանդ փոքրիկ տղայոց համար յանձնարարելի լուծագոյն լուծողական մ'է: Միայն թէ, խաւարծիլը իւր ազդեցութիւնը կատարելն վերջը, յաճախ յամառ պնդութիւն մը յառաջ կը բերէ. այս պատճառաւ, ընդհանրապէս Մագնեսիայի (մանէեզի) հետ խառն կը մատակարարեն: Այս վերջինը օգտակար է նաեւ ստամոքին մէջ կերակրոց խմորումներէն յառաջ եկած թթուները չեղոքացնելու համար, ինչպէս եւ այրեցեալ մագնեսիան (մանէեզի գալսիկն) ալ այդ խմորումներէն յառաջ եկած բնածխային թթու (ապիս գառպոնիք) կոչուած կազին հետ միանալով, ասոր ազդեցութիւնը կ'ամլացնէ: Ընդհանրապէս մարսածէտ անձանց ստամոքսը կ'ուռի տիկի մը պէս ամեն ճաշէ վերջ. այս ուռնալը առաջ կուգայ բնածխային կազի ստամոքսին մէջ մթերուելէն, որ չկրնալով դուրս ելլել տակաւ ստամոքսը կ'ուռնցնէ, բայց երբ ճաշէն յետոյ քիչ մը այրեցեալ մագնէսիա առնուի, խմորումներէն արտադրուած բնածխային թթուն հետզհետէ անոր հետ միանալով, այդ անպատեհութիւնը տեղի չ'ունենար, եւ մինչեւ իսկ ուռնալէն վերջն ալ առնուած ատեն իսկոյն կը ամբեցնէ:

Խաւարծիլի բուսաջուր, իբր լուծողական

Խաւարծիլ 15 կում
Ջուր (պայծառ) 500 »

Ջուրը եռացուցէք, խաւարծիլը մէջը ձգեցէք (ջարդուած ըլլալու է), եւ թողուցէք քիչ մը պաղի, հաստ կտուէ անցուցէք, եւ խառնեցէք մէջը 15 կում մագնէսիա:

Առաւօտները անօթի փորանց գաւաթ մը:

Խաւարծիլի բուսաջուր, իբր կազդուրիչ

Խաւարծիլ (ջարդած) 5 կում
Ջուր 100 »

Թրջոց դրէք 24 ժամու չափ, պարզեցէք

(սխալմիջ ըրեմ), եւ գործածեցէք պարզ ջուրի տեղ:

Երբ մարտդութիւնը ստամոքսին մէջ ցաւեր յառաջ բերէ՝ եւ շատ թթու կը գոյանայ, այն ատեն պէտք է առնէք հետեւեալ բաղադրութիւնը.

Սաւարծիլ (փոշիացած) 5 կում
Ախիւն » 1 տասնորդակում)
Այրեցեալ մագնէսիա 5 կում

Իրար խառնեցէք, եւ 15 բաքէթի բաժնեցէք, ուրիշ պէտք է առնել, ցերեկուան եւ երեկոյեան ճաշերէն առաջ՝ մէյմէկ բաքէթ, զոր բերաննուդ մէջ լեցընելով, քիչ մը ջուրով կը կլէք:

Բայց բոլոր այս դեղաբաղաժական միջոցն՝ որը միմիայն առժամանակեայ ազդեցութիւններ կ'առնենան, հիւանդութիւնը միշտ զբօղելով, եթէ լուծն պատճառին առաջը չ'առնէք: Ուստի այս պարագային մէջ աւելի խոհեմութեամբ շարժած կ'ըլլաք, եթէ բըժիշկի մը խորհուրդներուն հետեւիք:

ՄԱՔՍԻՍ *

* Նախորդ թիւին մէջ ստորագրութիւնը սխալմամբ Ղ. ԲՈԼՍՍ գրուած է:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՃԱՆՁՆԱԼՈՒ Է

ԱՆԽԱՐԴԱԽ ԹԷՅՐ

Պատասխան էիւ 33 հարցման

... Տէր.

Պատ. Հանրագիտակիդ 17 թիւ թերթին մէջ, Մամուրէթ-իւլ-Աղիդէն Գէշիւեան Խոսքով անուն Պարոն հարցում ուղղած էր, եւ կ'ըսէր թէ Ինչպէս կարելի է ճանչնալ թէյեր. որովհետեւ իրենց կողմ ծախսւածները բոլոր խարդախուած են...

(1) 1 կումը 10 նի բաժնի լով, միայն 1 մասը առնել:

Շատ իրաւունք ունի, որովհետեւ հոս 8-10-12 զրոյշի կարգ մը թէյեր կը ծախուին, որոնք տեսակ մը բոյսեր են թէյի նմանող: Ընտիր եւ անխարդախ թէյերը գործածելու համար, պէտք է գտնէ 30-40 զրշ. վճարել: Ընտիր թէյեր կ'արտադրուին գլխաւորաբար Չինաստանէն. որոց անխարդախ եւ լաւ տեսակներ կը ճանչցուին տերեւներու յատկութենէն, ու թէյ պատրաստուելէն վերջ, ջուրէն ելած ժամանակ սղոցածեւ կ'երեւին: Բայց աւելի աղէկ միջոց, պէտք է գիտել միշտ վստահելի պատուար վաճառատանց, որոնք ապահովաբար տրուած զրամի փոխարէն միշտ աղէկ թէյ կուտան:

Յ. ԽԱԳՈՒԼԵԱՆ

Դժբաղդութիւն մը եթէ կայ հանրութեան համար, այն ալ իւր առօրեայ պէտքերուն ծառայող նիւթերը խարդախելու եպերիի գործողութիւնն է. որով կ'զրազին ամեն տեղ կարգ մը նեղամիտ անձեր. որոց առաջը առնել եթէ ոչ անկարելի, գէթ դժուարին գործ մը դարձած է: Բայց ի՞նչ կը հասկնանք խարդախութիւնը բնական: Որ եւ թանկագին ապրանք մը ամբողջովին կամ մասամբ օտար նիւթերով խառնել եւ իրրային ներկայացնել, որոնք բաղդատարար խաւանէն աւելի աժան ըլլալով խարդախուղը իր արդար իրաւունքէն աւելի շահ մը կ'ըստպատէ անկէ, առանց հոգ ընելու թէ, այդ միջոցներով ժողովուրդը կը կեղեքէ, ճշմարիտ վաճառականութեան արգելք կ'ըլլայ. արտադրող երկրագործին կամ գործարանատէրին արգար շահերը կը կողոպտէ, եւ այս պէս մասամբ երկրին յառաջագիտութեան խոչընդոտ կ'ըլլայ տիրող պետութեան շահերը վտանգելով:

Ամեն երկրի մէջ ալ օրէնքը կը դատաւարտէ եւ կը պատժէ այս կերպով հանրային վստահութիւնը չարաչար գործածող անձերը. որովհետեւ մէկ կողմանէ եթէ ժողովուրդը զրամական փրկութիւն մը կը կրէ, միւս կողմանէ ալ անոր առողջութիւնը կը խան-

գարի, մանսւանդ երբ սննդառութեան վերաբերեալ նիւթեր են. եւ մինչեւ իսկ շատ անգամներ ալ կեանքը կը վտանգեն:

Բայց փնտռենք անգամ մը պատճառը թէ, ինչո՞ւ կարգ մը արտադրիչներ կը խարդախեն իրենց ապրանքները: Առանց անոնց խղճին դիմելու, ամենէն տւելի իրր զլիաւոր պատճառ կրնանք ենթադրել ժողովուրդին դժուարահաճութիւնը, միամտութիւնը, եւ ամեն ապրանք գնելու անզուսպ տենչը: Երբ վաճառականը ձեզի խոստովանի թէ, իր ապրանքը թէեւ ստորին տեսակէ՝ բայց անխարդախ է, եւ այսինչին ծախածին վերայ շատ մը առաւելութիւններ ունի, չսխալուի որքէք հաւատալ անոր. եւ սխալի երթաք միւս վաճառատունէն ապրանքը գնելու, որ տեսակ տեսակ նիւթերով խարդախուած ըլլալուն՝ ձեր աչքին աղէկ կ'երեւայ, եւ մի ամտօրէն անոր արժանիքէն աւելի գին մը տալով կը գնէք: Ի՞նչ ընէ այս պարագային մէջ վաճառականը: Տարակոյս չկայ որ ինք ալ ի հարկէ խարդախուած ապրանքներ ծախել սխալի ստիպուի, իւր շահերը չվտանգելու համար:

Ամեն երկրի մէջ ալ, պատուաւոր եւ խղճամիտ վաճառականները մեծ հաշակ կը վայելեն. եւ մինչեւ իսկ տիրող պետութեան վտահալութիւնը գրաւելով բարոյապէս կը վարձատրուին անկէ: Ուստի երբ աղէկ ապրանք գնել կը փափաքիք, պէտք է զիմէք այս կարգի վաճառատուներու, որոնք գծուած շահախնդրութիւնները մերժելով, իրենց յաճախորդներու հետ միշտ ուղղամտութեամբ վարուիլ հաստատապէս սկզբունք ըրած են իրենց:

Կ. Եւրոպեան եւ Յ. Իսապուլեան Տեսարց վաճառատունը՝ 20 այսչափ տարիներէ ի վեր հաստատուած, Պօլսոյ հրապարակին վրայ մեծ հաշակ հանած է ուղղամտութեան եւ իր ապրանքներու ընտրութեան մասին. եւ ամբողջ Անատօլի գաւառներու մեծ մասին մէջ լաւ ընդունելութիւն կը գտնեն իւր ապրանքները: Մենք ըսել չենք ուզեր թէ, ուրիշ պատուաւոր տուներ ալ չեն գտնուիր, բայց իբր օրինակ ներկայացնելով Եւրոպեան եւ Իսապուլեան տունը, իրեն եւ իր նմաններուն դիմելով, ամեն կերպով կրնաք վրաստան ըլլալ թէ, ձեր վճարած գրամին փո-

խարէն, միշտ արժող ապրանքներ գնած պիտի ըլլաք: Եւրոպեան եւ Իսապուլեան տան ուղղամտութիւնը Կոյս. կառավարութեան կողմանէ եւս գնահատուած ըլլալով, ասիէ երկու շարաթ առաջ արտօնուեցաւ, Կոյս. Թուրքա կրիլ իր ճակատը:

Ահաւասիկ անգամ մը եւս այս կերպով վերոյիշեալ պատուաւոր վաճառատունը վրաստանութիւն կը ներշնչէ հանրութեան, եւ կ'արժէ որ, ժողովուրդը իւր իսկ ուղղակի շահերուն համար, քաջալեր կարգայ այդ կարգի ուղղամիտ վաճառականներու, վրաստանաւոր դիմելով անոնց խղճին. եւ Իսապուլեան էֆ. ի ըսածին պէս, եթէ վճարման մասին քիչ մը ժլատ չգտնուիք, եւ գոնէ քաջին 40 դրուշ վճարէք, անխարդախ եւ համով թէյ մը կը խմէք շարունակ:

Բայց թէ որո՞նք են այն միջոցները, զորս դիտութիւնը մեր տրամադրութեան տակ զրած է, խարդախուած թէյերը ճանչնալու համար, յառաջիկայ թւոյն մէջ պիտի բացատրենք զանոնք ըստ կարելոյն մանրամասնօրէն, նախապէս թէյի մշակութեան եւ թէյի պատրաստութեան վրայ խօսելէ վերջ. որով թէյի վրայ կատարեալ գաղափար մը կ'ունենաք:

Ղ. ԲՈՒԱՏ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԴՐՈՇՄԱԹՈՒՆԹԻ ՕՐԷՆՔԸ

Բ.

Որէնսդիրը պարտաւոր ընելու համար, ժողովուրդը որ անհոգ չ'գտնուելով՝ գրոշմաթուղթի տրամադրութիւնները յարգէ, ատոնց քով պատժական յօդուածներ ալ խմբագրած է. եւ այդպէս տուգանքի ենթարկելով գրոշմաթուղթի օրէնքին չ'համակերպուողները, մինչեւ մէկ աստիճան, թէ իր հասոյթի աղբիւրը կանոնաւորութեան մէջ մտցուցած է թէ

միանգամայն օրէնքին ճշգրիտ պորժագրութեան եղանակը ապահոված է:

Հիմա բացատրենք այդ յօդուածները:

1°. Դրոշմաթուղթերը փակցուելու են կնիքին կամ ստորագրութեան և կամ թուականին տակ, կամ տարբեր բացատրութեամբ՝ կնիքը կամ ստորագրութիւնը և կամ թուականը՝ մասամբ՝ դրոշմաթուղթերու վրայ գրուելու են, որպէս զի կարելի ըլլայ հասկնալ թէ այդ դրոշմաթուղթերը գործածուած և թէ միանգամայն ստորագրուած պահուն փակցուած են:

Հետեւաբար դրոշմաթուղթը այս եղանակաւ չփակցուած և կամ երբէք դրոշմաթուղթ չ'կրող թուղթերէն պարունակեալ գումարին վրայ՝ 100 ին 3 տուգանք կ'առնուի, եթէ այդ թուղթերը նիւղի դրոշմաթուղթի ենթարկուած տեսակներէ ըլլան. և կէս ոսկիէն մինչև երեք ոսկի՝ եթէ մաքրուի ենթարկուած թուղթերէ ըլլան:

Սակայն օրինական չափէն պակաս փակցուածներուն համար տուգանքը պակասին վրայէն կ'առնուի նիւղի և ենթարկուածներուն համար, և մաքրուի ենթարկուածներէն տուգանքին ամբողջութիւնը, նկատելով այս վերջինները իբրեք երբէք դրոշմաթուղթ չ'կրող թուղթեր:

2°. Պարտամուրհակներու, վարձու պայմանագրերու տակ գտնուած երաշխաւորութեանց համար, ըլլան առանց դրոշմաթուղթի և կամ օրինական չափէն պակաս, ինչ որ ալ ըլլայ պարունակեալ գումարին քանակութիւնը, այսինքն քրտան հաղարէ տելի կամ պակաս, առնուելիք տուգանքը կէս ոսկիէն մինչև երեք ոսկի է:

3°. Եթէ թուղթի մը մէջ քանի մը չահակից(ալաբատար=interessés) գրա-

նըին, տուգանքը զայն ներկայացնողէն կ'առնուի. սակայն այս վերջինն ալ միւսներուն կրնայ գիտնալ ընել համերաշխութեան (solidarité) օրինօք:

4°. Դատարանի մը կամ ժողովի մը և կամ պաշտօնական մարմնի մը կողմէ տուգանքի որոշում արուած թուղթերուն համար, առանց յապաւման, այսինքն առանց թուղթին պարունակած խնդրոյն լուծման սպասելու, գործադիր իշխանութիւնը (հիւքիւմէթի իճրայլ) տուգանքը կը գանձէ:

5°. Տուգանքը վճարելու պարտաւոր եղող անձը չ'կրնար թուղթը, տուգանքի փոխարէն, զայն իրմէ պահանջող դատարանին կամ ժողովին թողուլ:

6°. Դրոշմաթուղթի տուգանքին գանձման առթիւ թերացող պաշտօնեաներէն այդ տուգանքին եռապատիկը, և սակայն դրոշմաթուղթ չ'կրող թեզիքի, թափիքի և աղերսագրի նման թուղթերը ընդունող պաշտօնեաներէն կէս կէս ոսկի տուգանք կ'առնուի:

7°. Փոխանակազրկու և ձիռօի (') հանգամանք ունեցող թուղթերու համար, համերաշխութեան իրաւունքը կորսուած կը նկատուի, երբ ասոնք առանց դրոշմաթուղթի ըլլան:

Հետեւաբար ձիռօ ընողները երաշխաւորութենէ կ'ազատին, և այդ թուղթերուն տէրերը միմիայն քաշողներուն (tireur) և փոխանակազրկու համար զանոնք ընդունողին ալ կրնան զիմել, պայմանաւ որ ասոնց փոխարէնը ընդունողին իրկուած ըլլաւ՝ քաշողը հաստատէ:

(') Առեւտրական բուլքի մը տնային իրաւունքին տէր կողմէն ուրիշի մը փոխանցելու համար, բուլքին միւս երեսին վրայ գրուած եւ usnագրուած պարբերական (ձիռօ) կըսեն:

Այդ տեսակի թուղթերուն համար, զրոյմաթուղթը՝ խմբագրութեամբ թուականէն ալ վերջ կրնայ փակցուիլ, միայն թէ վճարօրը անցած ըլլալու չէ, և առաջին ճիւղն չեղած եռապատիկը դրոշմաթուղթ փակցուելու է:

8⁰. Հին դրոշմաթուղթի օգէնքին ժամանակէն ի վեր, գտնուած թուղթերուն տուգանքը նոր օգէնքին համեմատ կ'առնուի:

9⁰. Դրոշմաթուղթի գատերը ժամանցում (միւսրի զէման) չունին:

10⁰. Նիսպի ի տեղ՝ մաթոռ և մաթրոի տեղ՝ նիսպի դրոշմաթուղթ փակցուելուն մէջ օրէնքի հակառակ բան չի կայ. բաւ է որ փակցուելիք դրոշմաթուղթերուն քանակութիւնը օրինական չափէն պակաս չըլլայ:

Տուգանքի որոշումները (դարար) թէ գատարաններու և թէ ուրիշ պաշտօնական մարմիններու կողմէ ալ կը տրուին. սաչափ որ գատարանի կողմէ չարուած պարագային՝ արուած որոշումը, գարծազիր իշխանութեան միջոցաւ, իրեն զեկուցուած (թէպիղ) թուականէն մինչև 8 օր թուղթին տէրը, այդ որոշումին դէմ, աղերսագրով մը նախնական դատարանի հոգադիր ճիւղին կրնայ իրիւղը ընել. այսինքն՝ ոչաշումը ջնջել տալու համար ինդրադիր մը տալ. Ութ օրէն վերջ, տուգանքը, գարծազիր իշխանութեան միջոցաւ կը գանձուի. միայն թէ՛ երբ թուղթին տէրը օտարահաշիւ պատակ հղած պարագային՝ տուգանքի որոշումները Առեւտրական խառն դատարանին (Մահքէմէի մուխթէիթէի թիճարէթ) կողմէ կը դրուին. բացառութիւն կը կազմեն այն տուգանքները՝ որոնք 1000 դրուչէ պակաս են:

Այդ տեսակի իրիւղը մ'ըլլալուն պէս, ընդհանուր գատարաններ (միւստայի ու-

մուսի) կարծիքը առնուելէ և երկու կողմերը, ի պահանջել հարկին կանչուելէ վերջ, գատարանը խնդիրը քննելով որոշում մը կուտայ, և այդ որոշումը, դարձեալ ընդհանուր գատարաններին միջոցաւ, թուղթին տիրոջը և տուգանքի որոշում տուող մարմնին կը զեկուցանէ:

Սա միայն կը մնայ ըսել թէ՛ տուգանքի առթիւ արուած որոշումներուն համար միւսիայն վճարել տեսնին (մահքէմէի թէմէիղ իսթիւա տայիրէսի) կրնայ զիմուիլ. և՛ այդ օրինական շնորհին համար ալ, զեկուցման թուականէն առ առաւելն 8 օր որոշում ըլլալով, թէմէիղի աղերսագրոյն արձանագրութեան (քայտ) թուականը թէմէիղի պայմանաժամին լսկիւրը նկատուած է. Խրիսա ճայիրէսին ալ, իրեն ստիպուելուն պարագայ (մէվատը միւսթաճէէ), իրեն մատուցուած միւսթիղիներէն աւաջ, ընդհանուր դատարան խաղաղեւտին (պոշ միւստայի ումուսի) կարծիքը առնուելէ մինչև հինգ օր խնդիրը կը քննէ:

Եթէ այդ տեսակ տուգանքի գատերը մինչև 1000 դրուչ ըլլան, գումարը գատարանին անտուկը (վէզնէ) իբր տուանդ (dépôt) կը ձգուի. այդ դամարէն տեղին համար, աղերսագրոյն մերժուած պարագային՝ վճարուած տուգանքը, տուանդ գծկամակութեան վճարելու համար, երաշխաւորագիր մը պէտք է:

Դրոշմաթուղթի տուրքէ ազատ եղող թուղթերը հետեւեալներն են:

1⁰. Կարօտեալներուն, աղբատներուն, վարժարաններուն, աղօթատեղիներուն և բարեկամատակ հաստատութեանց իշխանապետները:

2⁰. Մէկու մը աղբատ ըլլալը ապացուցանող իմոխսագիրը. կարօտեալներուն ամսաթուղթներուն թուղթերը. և տուանդ կենդանի ըլլալը հաստատող իշ-

մութապէրները . աղքատներուն պատանքի ու թաղման ցուցակները :

3°. Օրինազանցութեան (գապահաթ), յանցանքի (ճիւնհա) և ոճիրի (ճինայէթ) մագպաքաները և իշամները :

4°. Գիտութեանց և դպրութեանց վերաբերեալ գրքերը :

5°. Պաշտօնէկոյ հրաժարագրերը, բույակայելու աղերսագրերը :

6°. Պաշտօնական մարմիններու միջև փոխանակուած չէքերը :

7°. Արքունի դանձին եղած աղղաղիրները (խոպարնամէ) :

8°. Պաշտօնէկոյ օգտփոխութեան կամ դարմանութիւն և կամ հանգստեան կոչուեցնուն համար բժիշկներու կողմէ արշուած տեղեկագրերը (rapport) . վիրաւորեալներուն , սպաննուողներուն ընծութեան արդիւնքը ցուցնող բժշկաց տեղեկագրերը :

9°. Հեռագրական պաշտօնական հաղորդակցութեանց (մութապէրէի ըէմիյէ) ընկալագրերը :

10°. 500 դրուշէ աւելի ամսաթուշակ ունեցող պաշտօնէկոյ հանգստեան թուշակի մագպաթաները :

11°. Դատարաններու կամ պաշտօնական մարմնոց նախագահներու կողմէ հանրութեան համար դրուած թէքքէրէները և թաքրիւնները :

12°. Կառավարութեան յատուկ ծանուցումները :

13°. Ապահովութեան անտուկի ճիւղ-սանները և իխպարնամէները . երկրագործական գրամատան (ղրրաթ պանքաթը) իխպարնամէները :

14°. Երկաթուղոյ պաշտօնէկոյ կողմէ տուգանքի և կամ ուրիշ առթիւ Ռաւիկանութեան տրուած թուղթերը :

15°. Թէգֆիյէի շուհուսի (') համար ,

(') Թէգֆիյէի շուհուսը ձեւակերպութիւն մ'է որով դատարանը վկանեալն ուղղամիտ եւ արդարաւստ անձեր ըլլալին կը ստուգէ :

Շէրիի դատարանաց կողմէ գրուած մէսքուրէները ('), պատժական դատարաններու կոչնագրերը (ճէլպ վէ իհզար վարագալարը) :

17°. Զինուորներուն հիւանդութեանց առթիւ տրուած մագպաքաները :

Ծան. 1 — Երբ տուգանքի դատարարաւ որը մեռնի , այդ տուգանքը , ժառանգորդներէն չ'կրնար գանձուիլ . որովհետեւ պատիժը փոխանցական չէ :

Ծան. 2 — Որբերու (էյթաւ) անուշով ներկայացուած թուղթերու տուգանքները՝ զանոնք ներկայացնող պաշտպաններէն (վէի) և կամ ինամակալներէն (վասի) կ'առնուի :

Ն . ԹՈՔԱՅԼԵԱՆ

ՇԵՐԱՄԱՔՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԹԵՕՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

ԹՄՐԱԵՏԻ ՍՌԱԶՔԸ ԱՌՆԵԼՈՒ ՇԱՄԱՐ

Նախագորշական միջոցներ

(Շար. Տիւ Թիւ 21)

Նախ պէտք է հասկնանք թէ , որոնք են այն նպատաւոր պատճառները կամ պայմանները , որ հիւանդութեան սերմը անարգել կ'աճեցնեն :

Բնականաբար այս հարցումը ամենէն առաջ մեր մտքին մէջ կը ներկայանայ , երբ հիւանդութիւնը արգիւծու կամ բժշկելու միջոցները փնտռել կուզեմք :

Արդ՝ փորձով հաստատուած է որ , այս

(') Դատարանը ստուգելու համար որ վկայութիւն տուող անձերը նշուաւսալսու են , բուրբ մը կը գրէ նախապէս իր կողմէ ընտրուած քանի մը անձերու որոնք այդ բուրբին մէջ , վկանեալն անուցներուն տակ , «վկայութիւնն ընդունելի են» պարբերութիւնը կը գրեն : Այդբոլիս մէսքուրէ կըսեն :

զաղտասերը աճեցնող ամենէն նպաստաւոր պատճառը՝ խոնաւութիւնն է. մանաւանդ երբ պտղաբերութեան աստիճանին մէջ բնական անկայ, որ տեղի կ'ունենայ, ինչպէս ըսած ենք, թրթուրին մեռնելէն վերջը: Ասոր բացայայտ ապացոյցն սա է որ, թրթուրը մեռնելէն վերջը կը չորնայ եւ կը կարծրանայ. որովհետեւ՝ զաղտասերը իր բուսաւորութիւնն պէտք եղած ջուրը՝ թրթուրին մարմնոյն մէջ գտնուած հեղուկը ձգելով կ'ստանայ, ուրիշ եւ յառաջ կ'ազդայ այդ չորութիւնը:

Երբ այս հիւսնդութենէն մեռած թրթուրները չոր օդի մը մէջ դնէք, պտղաւորումը դժուարութեամբ եւ գէշ կերպով կ'ըլլայ. նոյն միջոցին՝ երբ մանրադիտային քննութեան ենթարկէք, պիտի տեսնէք որ բոլոր թարչամած է: Բոլորովին երաշտ օդի մը մէջ անկարողը կը չորնայ եւ կը մեռնի, ինչպէս պիտի ըլլար ուրիշ ո եւ է բոյս՝ այդ պարագային մէջ:

Բաւական չոր օդի մը մէջ, թրթուրին մորթը կարծրանալով, անկարողին մանրէթերը՝ որ մորթին տակ կ'աճին, առանց կարողանալ ծակելու զայն, ներսը կը մնան եւ պտղաբերութիւնը տեղի չունենար:

Քիչ չափ խոնաւ օդի մը մէջ անկարողը կը պտղաբերի 3—4 օրէն: Եթէ քիչ մը չոր ըլլայ օդը, դժուարաւ 8—10 օրուան մէջ տեղի կ'ունենայ այս պտղաբերութիւնը. եւ ինչպէս ըսինք վերը, անկարողը բոլորովին կ'ոչնչանայ, երբ օդին մէջ ամենեւին ջրաշուրի չգտնուի:

Երբ թմրախտէ մեռած թրթուր մը անկողին վրայ թողուք, ամենէն առաջ թրթուրին մորթին անկողնոյն դպած տեղէն պտղաբերութիւնը կ'սկսի. այսինքն՝ խոնաւութեան հաղորդ գտնուած տեղէն:

Այսպէս թմրախտը խոնաւ տարիներու մէջ աւելի սաստիկ կ'ըլլայ, քան չոր տարիներու մէջ:

Բոլոր այս դիտողութիւններէն կը հետեւցնենք որ, թմրախտի տարածումը արդիւնաւոր համար, պէտք է նախ անոր սերմերը ոչնչացնել լուացքներով եւ ձխումներով: Ուստի շերամի մշակութիւնը լրանալէն անմիջապէս ետքը, նախ տընցէք խնամով եւ ամենայն ճշդութեամբ աղբիւրը ոչնչացուցէք,

եւ ամբողջ շերամատունը լուացէք (գետինը, պատերը, առաստաղը, կահկարասիք եւն.) կրաջուրով, կամ քլորային կրաջուրով, զոր կը պատրաստեն 10 օխտ ջուրին մէջ 200 տրամի չափ կիրի քլորուկ (ֆիւէն գայմաղը) խառնելով: Այս գործողութիւնը կատարելու է այնպէս, ինչպէս կանայք տախտակ կը չփեն: Ոմանք կիրի քլորուկին տեղ կը դրածածեն պղնձի ծծմբատ (կապուտ որջասպ կիօզ քաշի sulfate de cuivre) նոյն քանակութեամբ, այսինքն՝ 10 օխտ ջուրին $\frac{1}{2}$ օխտ արջասպ խառնելով: Այս պարագային պէտք է որ ջուրը քիչ մը տաքցնէք, որ արջասպը աղէկ հալի: Լուացքը լրանալէն անմիջապէս վերջը պէտք է ձխումներ ընել ծծումբով (ֆիւֆուրս) կամ քլորով:

Երբ ծխումը ծծումբով կատարէք, հետեւեալ եղանակով ըրէք:

Շերամատան չորս անկիւնները դրէք մէյմէկ հողէ ամաններ (ջանախ), հատ մ'ալ մէջտեղը. ասոնց մէջ լեցուցէք նախ աւաղ (գուռ) բերնէն քիչ վար, յետոյ՝ մէկ քիւծ ծծումբը հինգի բաժնեցէք եւ դրէք ամեն մէկ ամանի աւաղին վրայ. այսինքն՝ իւրաքանչիւր ամանին մէջ թրթուրին օխտայի հաշուով 60 էն 65 տիրէմ ծծումբ, ամենուն վրայ դրէք քարիւղի (մեր վառած սովորական կաղը) մէջ թաթխուած լաթի կտորուանք, եթէ կուղէք, մէյմէկ քիչ ալ քարիւղ ծծումբին վրայ սրտկեցէք առաջուց. այս ընելէն վերջը, ամենէն առաջ դռնէն հեռու գտնուող ամանէն սկսելով, վառեցէք քարիւղի մէջ թաթխուած լաթերը, որոնք բռնկելով, ծծումբն ալ կը բռնկցեն. եւ վերջացուցէք գործողութիւնը, դրան մօտ գտնուած ամանը վառելով, որ ատեն պէտք է անմիջապէս դուռը դրցէք եւ դուրս ելլաք: Չմոռնաք նաեւ ըսելու որ առաջուց շերամատան ամեն ծակը, ծուկը խնամով գոցելու է, որպէս զի ծծումբին մոխրը իր մէջը մնալով, հոն գտնուած ամեն տեսակ մանրէները (ւիրուս) ստոկեցնէ:

Վերոյիշեալ ծծումբի քանակութիւնը 100 խորանարդ մետր պարունակութիւն ունեցող սենեակներու համար է: Այսինքն՝ եթէ ձեր շերամատունը 5 մետր լայնք, 5 մետր երկայնութիւն եւ 4 մետր ալ բարձրութիւն ունի, իր պարունակութիւնը 100 խորանարդ մետր կ'ընէ, որովհետեւ՝ 5 տնգամ 5 կընէ

25, և 4 անգամ 25 ալ 100 ($5 \times 5 \times 4 = 100$) : Այս տարածութիւնով սենեակ մը, 25 էն 80 կռամ տուփ մը հունա բռնելու կը բաւէ : Այս հաշւով, եթէ սենեակնիդ մեծ կամ փոքր է, ծծումբին քանակութիւնն ալ աւելցնել կամ պակսեցնելու է :

Շատ շերամաբոյժեր ծծումբին տեղ կը գործածեն պարզապէս կիրի քլորուկ. այսինքն՝ վերը յիշուած քանակութեամբ ջուրի մէջ հալեցնելն վերջ, շերամատան ամեն կողմը անով կը լւան. և կամ քլոր կը ծըխեն, որ կըլլայ հետեւեալ կերպով :

Ծծումբ ծխելու պէս ամաններ դրէք շերամատան մէջ. սրաց մէջ փոխանակ աւազի՝ լեցուցէք աղ, իւրաքանչիւրին մէջ 100 տըրամ, որիչ երկաթէ ամանի մը մէջ լեցուցէք նախ 2 օրս ջուր. և կամաց կամաց միշտ խառնելով փայտով մը, նոյն շափ ալ ծծմբային թթու. (զաճ եաղը). և բաժնեցէք այս խառնուրդը աղ պարունակող ամաններուն մէջ, որ պէտք է սկսիլ միշտ հետուն դրուած ամանէն, և վերջացնել դրան մօտիկ ամանին մէջ լեցնելով : Ծծմբային թթուի լուծուածքը երբ ազին հետ խառնուի, խիւղն եռացում մը յառաջ կուգայ, աղի բազադրութեան մէջ գտնուած քլորը զատուելով, ամպի պէս կը տարածուի :

Քլորը ազգու հականեխիչ և մանրէասպան մ'է, որ իր կազ վիճակին մէջ, ամեն ծակ ու ծուկը մտնելով, բոլոր վտանգաւոր մանրէները կ'ոչնչացնէ, և ամենեւին կասկածանաց ալ տեղի չձգեր : Գործողութիւնը աւելի արագ կը կատարուի, եթէ ծծմբային թթուն առանց ջուրի գործածուի. բայց այն ատեն ուշադրութեամբ լեցնելու է աղին վրայ. որովհետեւ մէկէն ի մէկ եռացում յառաջ գալով, կրնայ ըլլալ որ ամանէն դուրս զեղու, և զգեստնիդ կամ ոտքերնիդ այրէ :

Հետեւեալ տարին երբ վերսկսիք շերամաբուծութեան, վերայիշեալ գործողութիւնները ճշգրտորէն կրկնել վերջ, այսինքն՝ լւացք, ծխում եւն, գործածեցէք ձեր հունտերը լաթերուն վրայէն դանակով մը սկըրդելով և խնամով լւալէ և չորցնելէ ետքը : Այս հաշտերը, ամբողջ ձմրան եղանակին մէջ պէտք է ցուրտ և չոր տեղ մը պահուած ըլլան :

Բուժման ժամանակ, երբէք ջրի չոգիով ու-

ղողուն մթնոլորտի մը մէջ չթողուք թրթուրները. երբ կը տեսնէք թէ, հակառակ բոլոր ձեր ջանքերուն, ևղանակը անձրեւոտ երթալով, ինչպէս չըջակայները, նոյնպէս ալ ձեր շերամատան օդը սաստիկ խոնաւ կ'ըլլայ, այն ատեն կիրի քլորուկի ամանները շատցուցէք շերամատան մէջ, որ խիւղն իրեն քաշելով օդին մէջ գտնուած ջրաշագին, խոնաւութեան առաջքը դիւրութեամբ առած կ'ըլլաք : Թրջած կիրի քլորուկը (ֆիռէճ գայնաղը. Պօլսոյ մէջ օրսան 50—60 փարայի կը ծախուի) չկորսուի, զայն կրնաք կրակի վրայ շագիացնելով չորցնել և կրկին գործածել : Եթէ առաջուց արդէն կրակին վրայ չորցնելով գործածէք, այն ատեն ջուրի հետ միանալու յատկութիւնը աւելի ազգու և անմշական կըլլայ : Նոյնպէս պէտք է այս պարագային մէջ ըստ կարելոյն հովահրելով, շերամատան օդը շարունակ վերանորոգել :

Երբ ախտաժէտ թրթուրներ տեսնէք, խիւղն հեռացուցէք բազմութեան մէջէն և ուշնչացուցէք. երբ հաստատապէս վստահ ըլլաք թէ անոնք վարակուած են, հետեւելով մեր ցուցած ախտանիշերուն : Երբէք ստակած թրթուրի մը դիակը տնկողնոյ վրայ մի թողուք, որ՝ ինչպէս գիտենք, անկողնոյ խոնաւութենէն օգտուելով, ողկուզաբեւ տնկաւոր չպողաւորի, և այս կերպով իր լսփիւռները շտարածուին շերամատան մէջ :

Վերջապէս բոլոր այս միջոցները ոչ միայն թմրախտի համար է, այլ նաեւ պղպեղախտի և փտախտի համար ալ. և եթէ բոլոր այս պայմանները մանրակրկիտ նկատողութեան առնենք, Մ. Բասթէօռի առաջարկած «Շերամբուծութիւնը խորհեռու մեջ» դրութեան կը հասնինք, որու միջոցաւ ամեն կասկած կը վերնայ, և շերամաբուծին աշխատութիւնները յաջողակութեամբ կը պըսակուին, զոր պիտի բացատրենք իր կարգին :

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

բիծեր կամ աղսեր ջնջելու միջոցներ

Պետղի եւ գիւնի բիծեր

Բրդէ կամ բամպակէ կերպաներու վրայ դանդաղ պտուղի կամ գինիի բիծերը կ'անյայտանան. հետեւեալ կերպով. Ա. միջոց. պէտք է բիծերը անուշադուրով (ամօնեալ նիշասրոյ ռուհր) թրջել, եւ յետոյ մաքուր ջրով լուալ: Բ. միջոց. կերպանին տրտաւորեալ տեղերը նախ թրջեցէք պարզ ջրով, յետոյ սպունդը ժաւելի⁽¹⁾ ջուրի մէջ թաթխելով լու մը սրբեցէք եւ յետոյ մաքուր ջրով սրբեցէք:

Իսկ կտաւէ եւ մետաքսէ կերպաններու վրայ դանդաղ բիծերը կ'անյայտանան պարզ ջուրով լուալով, եթէ աղտը հինցած չէ:

ձերմակ մետաքսէ կամ կտաւէ կերպաններու բիծերն ալ, ծծումբի (ֆիւֆուրս) ծխացումի (քիւքսիս) բռնելով կ'անյայտանան. բայց, ղգուշացէք գունաւորներէն, որովհետեւ ծծումբը կը ճերմկցնէ:

Մելանի եւ ժանգի (բաս) բիծեր

Գիտորով (մագի) պատրաստուած մեղաններու բիծերը, պէտք է լուալ օճառով, եւ յետոյ 8 մաս ջուրի մէջ լեցնել, 1 մաս քլորֆորային թթու (քուզ ռուհու) եւ այդ ջրով լուալ:

[¹] Ժաւելի ջուրը կը պատրաստուի նետեալ կերպով.

կիրի փորուկ (ֆիւրէճ խայմախի)	20 մաս
Նասրոնի բնածխաս (սոսա)	25 »
ջուր.	600 »

Այս խառնուրդը շիշի մը մէջ լեցնելով՝ օրը քանի մ'անգամ ցնցեցէք, եւ 2 օրէն պարզուեալ անցուցէք:

Կընաք նաեւ դործածել, ճերմակ բրդէ եւ բամպակէ կերպաններու՝ ժանգի եւ վերոյիշեալ կերպով պատրաստուած մեղանի բիծերու համար, թրթնջկային թրթու (ասիս օֆաշիֆ):

Բայց նախ լուացէք, եւ յետոյ դործածածեցէք այս գեղը:

Աղսոս ձեռնոցները մաքել

Իւրաքանչիւր ձեռնոցի՝ մաքրելու համար, 100 փղ. կը վճարուի. եւ եթէ քանի մ'անգամ մաքրել տաք, քիչ ժամանակէն ձեռնոցի մը գինը վրայ տուած պիտի բլլաք անզգալաբար, աւելի աղէկ չէ՞ որ դուք մաքրէք ձեր ձեռնոցները, որ խնայողութիւն մ'ըրած կըլլաք:

Ահա ասիկ ձեզի լու միջոց մը. ձեռնոցներու աղտոտ տեղերը ցանցեցէք այրած ոսկորի փոշի, որ խիստ բաւակ ըլլալու է, (կամ եթէ կուզէք փոշին չղարշէ (քիւրպէն) անցուցէք), դէք վրան ծծումբ թուզթ մը, եւ 1-2 անգամ տաքցած արդուկ մը անցուցէք վրայէն:

Եթէ այս կերպով աղտերը չի մաքրուին, դործածեցէք լեմօնի իսկուծիւն (իլիմօն ռուհր) կամ կնդրիս (պանգիւն), եւ ուժով շփեցէք:

Այս ընելնէդ վերջը, սեղանի մը վրայ դրէք ձեռնոցները, եւ մատները քաշելով բացէք, կամ եթէ կ'ուզէք կաղապարի (խաշիպ) վրայ անցուցէք, որ աւելի աղէկ կ'ըլլայ: Եթէ կաղապար չգտնուի, բամպակ կտիւցէք ձեռնոցի մասներուն մէջ. յետոյ քիչ մը քեռ ա մուշօն (չուխա մաքրելու կաւ) եւ քիչ մ'ալ փոշիացած սղաղիկ (շապ) իրար խառնելով՝ միջը թաթխեցէք ասուի (Փանէշա) կըտոր մը, եւ ուժով շփեցէք ձեռնոցը:

Բաւական շփելնէդ վերջը, փայտի կըտորով մը ծեծեցէք, որ փոշիները թափին, եւ յետոյ մաքուր ասուիով մը կըր-

կին շփեցէք: Բայց նայեցէք որ ջրով թրջելու պէս չթրջէք ձեռնոցը լեմօնի խափով թիւնով, որ կոչին չ'այլայի:

Ուրիշ միջոց

Առէք օճառի փոշի, ձեռնոցին աղտոտ մասերուն վրայ ցանեցէք, և ուժով մը ասուրի կտորով շփեցէք: Աղտը ասուրիին վրայ կ'ենէ ամբողջովին, այդ պատճառաւ պէտք է ուրիշ ասուրի կտոր մը թաթխել՝ աղէկ տեսակ կաւիճի փոշիի մէջ, և ասով աղէկ մը շփեցէք, ինչպէս որ քիչ մ'առաջ ըսած ենք, եթէ կաղապար չունիք, կրնաք նաեւ գործածել կլոր փայտեր, որոցմով կրնաք լանալ ձեռնոցին մասերը:

Ուրիշ միջոց մ'ալ

Ասուրի կտոր մը թաթխեցէք կնդրիտի (պաւլագիւն) մէջ, և ուժով շփեցէք, յետոյ վերը յիշուածին պէս ըրէք: Ամբողջ աղտոտութիւնը ասուրիին վրայ ելնելով ձեռնոցը իւր նախկին փայլը կը ստանայ:

Լիմօնի խկութիւնը, բոլոր իւղոյին խկութիւններու պէս, ինչպէս և կ'ըրիտը, ձեռնոցները չեն աւրեր: Միայն թէ գէշ հոտ մը յառաջ կը բերեն, որ սաւայն 2 ժամէն կ'անյայտանայ:

ԱՐԱՔՍ

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

Թիւ 39. Լեկալոյու — Յ. Վ. Տ. Յովսէփեան
— Հաւկիթը թարմ պահելու եղանակին համար Ձեր տուած բացատրութիւնն մեծապէս գոհ եղանք. ինչպէս որ յայտնի է, ամառը, հաւկիթը 15-20 օրէն իր բռնելիք ճամբան ցոյց կուտայ. այսինքն կամ կը հոտի և կամ հոտելու կը մօտենայ, արդ՝ ես կրաջուրով

20 օր փորձելով հաստատած եմ թէ ձիւդ 2-3 օրուան ամուսն հաւկիթի նման թարմ կը կենան: այս դրութիւնը եթէ ամիս մ'առաջ հրատարակէիք, այն ատեն հաւկիթը շատ աժան էր և հազարներով պիտի կըրնայինք պահել և բաւական չափ գոյացնել. բայց հիմա սուղացաւ, և քիչ պիտի կրնանք ժողվել. և հաստատ ալ չենք գիտեր որ 6-7 ամիսէ վերջը հաւկիթները ամբողջովին թարմ պիտի մնան. և կամ թարմ մնալով խաչելու ատեն պիտի ճաթին, ասոր փորձը 6-7 ամիսի կարօտ է, և հետեւաբար մեզի համար առայժմ անբացատրելի:

Պատ. — Եթէ Հանրադիտակի մէջ բացատրուած միջոցը ճշդիւ գործադրէք, հաւկիթները մինչեւ տարի մը առանց աւրուելու կը մնան, և խաչած ատեննիդ ալ չեն ճաթիր. մի' վախճաք, կրնաք ապահովապէս ձեռնարկել. միայն թէ, երկար ատեն պահուելիք հաւկիթներու ամաններուն երեսի ջուրին երբէք դալելու չէ. որպէս զի երեսի կապած մաքը պատուելով օդին հետ հաղորդ չ'գտնուի:

Թիւ 40. Մ. Մ. Եփեփաքսաբեան. — Այն բան որ շատ է, ընտրութիւն ընելը դժուար է, մանաւանդ անոնց համար՝ որոնք նոյն գործին մօտէն տեղեակ չեն:

Արդ՝ տարի մը կայ, որ կեանքերնիս պիտի ապահովագրենք: Ապահովագրական ընկերութեանց գործակալներէն շատեր մեզ դիմեցին փոխանակ մենք անոնց դիմելու, սաւայն մեր բոլոր բանակցութիւններն արդիւնք մը չունեցան, որովհետեւ չկրցինք համոզում մը գոյացնել թէ՛ որ պայմանները չափաւոր են մ. գ, և թէ՛ որ ընկերութիւնը ամենէն աւելի վտանգելի է:

ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

ԳԻՏԱԿԱՆ ԺԱՍԱՆՑՆԵՐ

Խնայողական ցայգալանքիւ. Կան կարգ մը մարդիկ՝ որոնք չեն սիրեր առանց ցայգական

թեղի պառկիլ մութին մէջ. մնաց որ այս ամ-
բան անտանելի գիշերներուն հաճելի բան մ'է
գէթ լուսնի նուազկոտ պլպլուքով մը անցու-
նել անքունութեան կարկարանքները: Ահա՛
չառ խնայողական միջոց մը ցոյցականութեղ
մը ձեռք բերելու:

Առէք ընկուզի մեծութեամբ վաղկայի կտոր
մը. պլորեցէք ու կեդրոնական մասը բարակ-
ցուցէ՛ք այնպէս մը՝ որ ամբողջութիւնը կտնի
(քէլէ) մը ձեւն առնէ. յետոյ ծայրը կտրե-
ցէ՛ք ու պզտիկ սկահակալի (ֆինճան թա-
պաղը) մը մէջ զրէ՛ք զանի, որուն մէջ պէտք
է ձէթ գտնուի ու յետոյ բռնկցուցէ՛ք: Այս
խնայողական կանթեղը կը վառի այնքան
ո՛րքան ատեն մնայ սկահակին մէջ, եւ գոհա-
ցուցիչ լոյս մը կուտայ:

* *

Անգղիոյ մէջ ծեր կին մը ղինեմոլութեան
յանցանքով 263րդ անգամն ըլլալով՝ անցեալ
շարթու գոտաւորին ներկայացաւ:

* *

Միայն մէկ կէտ ձկան (պալեհա) լեզուէն
780 օխա իւղ հանուեցաւ վերջերս:

* *

Ճարտնի մէջ իւրաքանչիւր գործաւոր իւր
զլիարկին վրայ եւ կռնակը նշանակած ունի
իւր գործը եւ վարպետին անունը:

* *

Երգչուհի մը կը հարցնէ իւր բժիշկին.

— Պ. Տօքթէօր, ստո՞յգ է թէ հաւկիթ
կլնելով մարած ձայնը կը բացուի, կը պոյ-
ծառանայ:

Անտարակոյս, կը պատասխանէ բժիշկը,
տեսէ՛ք հաւերը հաւկիթ ածնելուն պէս կը
սկսին պօռալ:

* *

Մօտ օրէն տմուանտնալու վրայ եղող եր-
կու նշանածներու միջեւ:

— Շիտակ ըսէք Պ. Երուանդ. չէ՞ք ցա-
ւիւր որ ամուրի կեանքէն պիտի հրաժարիք:

— Օ՛հ, ո՛չ, օրիորդ, եթէ գիտնալու ըլլա՞ր
որ ճաշարաններու կերակուրները անտանելի
կերպով գէշ են:

ԼՈՒԾՈՒՄՆ ԽՆԴԻՐ Դ. Ի

Համարիմք թէ տղան այժմ x տարեկան է:
Արդ՝ ասիէ կը հետեւի որ մայրն ալ այժմ
 $22+x$ տարեկան է:

Մօրը տարիքին խորանարդէն այսինքն՝
 $(22+x)^3$ էն թէ որ հանելու ըլլամ տղան
տարիքին խորանարդը այսինքն՝ x^3 Ը, այն
ատեն մնացորդը կամ տարբերութիւնը պի-
տի ըլլայ 34606 թիւը. ուստի հաւասարու-
թիւնն այսպէս կրնանք դնել:

$$(22+x)^3 - x^3 = 34606$$

Գործողութիւն

$$(22+x)(22+x)$$

$$484 + 22x$$

$$22x + x^2$$

$$484 + 44x + x^2 (22+x)$$

$$10648 + 968x + 22x^2$$

$$484x + 44x^2 + x^3$$

$$10648 + 1452x + 66x^2 + x^3 - x^3 = 34606$$

$$10648 + 1452x + 66x^2 = 34606$$

$$66x^2 + 1452x - 23958 = 0$$

$$-726 \pm \sqrt{527076 + 1581298}$$

$$x =$$

$$66$$

$$\sqrt{2,10,83,04} = 1452$$

$$11,0:24 \quad x = 1452 - 726 = 726:66 = 11$$

$$1483:285$$

$$66$$

$$5804:2902$$

Պատ. Տղան այժմ 11 տարեկան է. մայրն
ալ այժմ $11 + 22 = 33$ տարու է:

$$\Phiորձ. 33 \times 33 = 1089 \times 33 = 35937$$

$$11 \times 11 = 121 \times 11 = 1331$$

$$35937 - 1331 = 34606$$

ԵՐՈՒԱՆԴ. Մ. ՏԵՕՅԻԻՃԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ը.

Ուղղանկիւն երկրի մը չըջագիծն է 370
մեթր՝ եւ մակերեսայթը, 8346 քառ. մեթր.
ո՛րչափ է երկայնութիւնը:

Տ ՄՈԶԱՃԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՄԻԱՍՏՈՐԷՆ ԲԱՅԱՏՐՈՒԱԾ

Անտուակ — Սիրուն՝ եթէ աղջիկ է, չարածճի՝ եթէ մանչ է:

Անքնակելի — Կեսրոջ տուն:

Անգթութիւն — Մեծատանց զօրավիգը:

Անգին — Վարժապետաց քրտինքը:

Անգործութիւն — Արձակուրդ:

Անէձք — Պառաւանց դէնք:

Անկեղծ — Ո՞վ կ'ըսէ թէ մածունս սեւ է:

Անկիրթ — Առնելիք պահանջող:

Անհրաժեշտ — Դրամ պահանջելու մասին գրուած թղթերուն աղը:

Անմեղութիւն — Նորածին մանկանց քով:

Անմիջապէս — Առնուալն 15 օր:

Անշարժահաս — Դեռ չէ ամուսնացած:

Անպատճառ — Ամէն պարագայի մէջ զգուշացիր այս բառը գործածելէ:

Անփոփոխ — Կարգուելու Աղջկանց տարիքը:

Անօթութիւն — Վարժապետաց ապագան:

Աշխատասէր — Մեղուն ու միջիւնը:

Աշուն — Ծերերը թող վախճան:

Աշտուրջ — Եւ հսկողութիւն. երկրորակ քայրեր են ասոնք, որոց պաշտօնն է փայլ տալ հոգարարձուաց պաշտօնավարութեան:

Ապացոյց — Մի՛ փնտռեր, միայն հաւատա՛:

Ապերախտ — Իրաւունքը պաշտպանող:

Ապուշ — Դրամ չ'ունեցող:

Ապսպրել — Կանայք լու գիտեն:

Ապտակ — Առձեռն ծեծ:

Ապրիլ — Կեանքի դէմ տոկալ:

Առանձին — Հրապարակաւ:

Առաջարկել — Մերժուիլն աչքն տունել:

Առաւօտ — Որ ւն լուսով աղքատը կ'սկսի թուել իւր ցաւերը:

Ատիթ — Երթայ նէ չի գոր:

Առնելիք — Ունիս նէ աղէկ, տուող ըւայ նէ աւելի աղէկ:

Առողջութիւն — Չգուշացէք լրեկոյթներէ:

Առնեղործութիւն — Լաւ զբաղում մը գեղեցիկ սեռին համար, որով միջոց կը գտնեն չարիք խորհելու:

(Շարունակելի)

ԹՂԹՄԿՅՈՒԹԻՒՆ

Հալեպ. Ս. Պողիկեան. — Ներկայացուցուած անձինք բաժանորդ նշանակուած են: — Երկասիրութեան նիւթը գիտնալու է որ պէտք եղած պատասխանը տանք:

Սիլիվրի. Ս. Սրենց. — Ստացանք Ձեր նամակը եւ բաժնէ գինը. շնորհակալութիւն:

Էգիւնե. Գ. Շահինեան. — Նոյնպէս պահաս թերթերնիդ զրկուած են:

Ռոստոք. Մ. Կ. Մալաքեան. — Մասնաւոր նամակ պիտի գրուի:

Մանիսա. Կ. Էօլմէզեան. — Նոր բաժանորդները արձանագրուած ենք:

Մանիսա. Դեղում Ունճեան. — Շնորհակալութիւն Ձեր ջանքերուն ալ:

Սեբասիա. Յ. Գարահիւօլեան. — Գանձեցինք 75 դահեկանը Բիզանդիոնի խմբագրատունէն: Լէսիվ, Մաժիք եւ Վէնիս յանձնուած են Ձեր յանձնարարած տեղը: Բաժանորդ արձանագրեցինք Ներսէս ԼՓ. Ելթիմեան. շնորհակալութիւն Ձեր տեղեկութեանց եւ ջանքերուն:

Իւսկիւպ. Ա. Նաթանեան. — Ստացած ենք Ձեր ուղղարկած վեցամսեայ բաժնէ գինը:

Սիւնայ. Յ. Կ. Պետրոսեան. — Շնորհակալութիւն. գանձեցինք Ձեր նոր գտած բաժանորդի տարեկանը, Ձեր յանձնարարած տեղէն:

Աւմաւ. — Ստացած ենք. շնորհակալութիւն:

Խաւքեղ. Խ. Քէշիշեան. — Ստացած ենք նամակնիդ. Ձեր խոհրդածութիւնները շիտակ են. Ձեր փափաքած բժշկական-առողջապահական ճիւղին ձեռնարկուած է արդէն յարգոյ Աշխատակիցի մը կողմէ. Ձեր գաղափարը յայտնեցինք իրեն. պիտի գրէ մերթընդ մերթ գաւառները տարածուած Ափրոզիոսեան տխտերու վրայ: Մասնաւոր նամակ պիտի ստանաք:

Ռաւանուզ. Գառնիկ Տէօքմէճեան. — Հասցէք Ձեր ստացած 15 թիւերուն փոխարժէքը հառուցանել, կամ թերթերը մեզի վերադարձնել:

Կեսարիա. Մ. Քէհեանեան. — Ստացանք Ձեր բաժնէ գինը, ինչպէս 8 թիւերը զրկուեցան:

Ալքըն. Օր. Զ. Շաղըճեան. — Ստացանք նամակնիդ. հանցեցք խմայնել թէ ո՞ւր զբոլած էք զրամը:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մերձան փողոց թիւ 57

Հաստատւալ 1803

ԴԱՍԱԿԱՆ ԳՐԵԱՆՔ

Մանկանց գիրքը կամ Հարպիկ ֆերական պատկերազարդ. բոլորովին նոր ոճով, Հատը 5 փարայ:

Մարգարիտներ, Մանկավարտէզի-Մաղկոցի մանուկներուն համար. կ'ուսուցանէ բազմաթիւ ձեռագիր օրինակներու վրայ կարդալ գրել, եւ կը բովանդակէ երգեր, խաղեր, առակներ եւ հանելուկներ: Գին 40 փարայ:

Արուստ քրտաւան, Մանկանց երկրորդ գիրքը, կը պարունակէ մանկական երգեր, կարճ հատուածներ, առակներ, բարոյալից փոքրիկ պատմութիւններ եւ անուածներ: Ը տիպ. Գին 2 դր:

Ոսկեմատենիկ Հայ տղայոց. երկրորդ գիրքը ընթերցանութեան. Դ. տպագրութիւն 120 պատկերներով. կը բովանդակէ բարոյական գեղեցիկ պատմութիւններ, ստանաւորներ, երգեր, առակներ, կրօնական եւ գիտական ամենակարեւոր գիտելիքներ, եւայլն: Գիրք մը՝ արժանի իր անուան եւ պիտանի ամէն հայ տղայոց: Գին 4 դրու:

Մանկավարժական ֆերականութիւն պատկերազարդ. մասն Ա. Բ. կ'ուսուցանէ՝ պատկերներու վրայ՝ հայ լեզուի քերականութեան նախագիտելիքը եւ ութը մասունք բաժնի 100է աւելի մեծ եւ փոքր պատկերներով վերայ: Գին լաթովկազմ Ա. մասի 50 փարայ. իսկ Բ. մասի 100 փարայ:

Սրբազան պատմութիւն հին եւ նոր Կոտա-կարանի, պատկերազարդ. 2. տպագրութիւն. նախնական կարգերու համար ամբողջ դասագիրք մ'է: Գին 100 փր:

Գեղեցիկ քրտաւան տաճկախօս տղայոց, կամ Վարժութիւն հայ խօսակցութեան եւ ընթերցման. Ա. եւ Բ. տարի. պատկերազարդ: Փորձով հաստատուած է թէ մէկ տարուան մէջ տաճկախօս տղայք կը կարդան ու կը խօսին հայերէն: Գին Ա. մասի 100 փր. Բ. մասի 3 դր:

Մարմնամարզութիւն առողջապահական եւ բժշկական, արանց, կանանց եւ փոքր տղայոց, առանց գործիքի. բոլոր վարժարաններու յարմար: Գին 4 դր:

Հայերէն լեզու կամ վարժութիւն գրաբարի. Ռոպրդսի գրութեամբ բոլորովին նոր ոճով, Գին 4 դր:

Թէ առաւօտեան Սրբազան երգեցողութիւնք եւ թէ ի դէմս Ս. Պատարագի երգեցողութիւնք հրատարակուած են, փոքրիկ դպիրներու համար: Գինը 20 փր:

ՍԻԱԼ Ե ԸՍԵԼ

Քէ՝ Պօզանեան Էճէնսիի ԴԱՍԱԿԱՆ ԳՐԵԱՆ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ անուն գիրքը ալ չի գտնուիր:

ՆՈՐ ՏՊՈՒԵՅԱԻ

հազարաւոր օրինակներ

Հարցուցէք Կ. Պոլիս, Մարգարեան գրատուն եւ ուղեցէ՛ք:

Դասագիրք Թուագիտութեան

ի պէս նախադասարանաց

Տ. ՊՕԶԱՃԵԱՆԻ

Գինը 5 դրու



ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՈՐԷԻՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ՆԻ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. Պոլիս Ֆենսիլեան խանի տակ թիւ 3

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամէն տեսակ թարմ գեղորայք. վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ գեղեր, գոնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն գեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Չարաճճի միուկներու և լուերու ևլն. համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծաքանակ բերել տուած են ուղղակի Տալմացիայէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք յարգոյ հասարակութեան:

Հանրագիտակ կը հրատարակուի ամեն Շաբաթ օր կանոնաւորապէս :
 Կը պարունակէ Գրական, Գիտական, Երկրագործական, Տնտեսական, Արհեստական, Եւայլն, Եւայլն. շահեկան նիւթեր :
 Երկրագործական, Արհեստական և Իրաւաբանական հարցումներու միշտ պատասխանները կը տրուին մասնագէտներու ձեռքով :
 Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ

Տնօրէն.—Խմբագրապետ Ղ. ԲՈԼՍ

Կ. Պոլիս, Մոսկուս փառա, Բիւրքնի խան Արամեան Տպարան, բիւ 26

Թերթիս վերաբերեալ մնացեալ գործառնութեանց համար ղիմել
 Գրավանառ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՀՐԱՄ ԷՖԷՆՏԻԻ

Կ. Պոլիս, Մէրհան Չարքըր բիւ 57

Z A U S A S T U L 1852

ՏՊԱՋԱՏՈՒՐԵԱՆ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ

396. ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ. 396

(Նանի գարեջրասան վրայի յարկը, հիւղ Չրպուհեանց դիմն)

Կասարեւագործեալ գործիքներու միջոցաւ ամենասասիկ ցաւած աղուներն լէկ անգամեն կը լեցնեն. ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ :

Նօրահնար եղանակաւ, նուրբ, հաւաքաւոր, եւ դիմացկուն արհեստական աղուներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դեմքի ձեւաւորութիւնը սարիքի, ժամողութիւն, եւ ազատ արտաանութիւն երաւսաւորեալ :

Բերնի հիւանդութիւնի կասարեւապէս կը բուժուին, ինչպէս նաեւ բմեցուցիչ դեղերու ամենակասարեւագործեալ ախտանքներու միջոցաւ, առանց ցաւի ասամնահանութիւն :

Յ. Գ. Ամերիկեան սովորութեան համաձայն՝ ձմեռները կիրակի օրերն ալ, (միւսնիւ կէս օր) ինչպէս նաեւ ամեն օր, (միւսնիւ կէս գիշեր) հիւանդ կընդունին Բերայի գործասեղին :

Գասըգիւղի կրնան դիմել իւրեանց բնակարանն. թիւ 1 Խրիսովիչի փողոց :